ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Գյուղատնտեսության և բնապահպանության վարչության
2020 թվականի կատարած աշխատանքների վերաբերյալ

2020 թվականի ընթացքում վարչության կողմից կատարվել են հետևյալ աշխատանքները.

Գյուղատնտեսության օժանդակության ծրագրեր

Վարչության մասնագետների կողմից մարզի բոլոր շահագրգիռ անձանց, ֆերմերների, իրավաբանական և ֆիզիկական անձանց մանրամասն ներկայացվել են գյուղատնտեսության զարգացմանն ուղղված կառավարության կողմից օժանդակության ծրագրերի նոր տարբերակները:

2020 թվականի ապրիլի մեկի դրությամբ մարզում նշված ծրագրերից օգտվել են 336 շահառու, ընդհանուր առմամբ տրամադրվել է 1.108.000.000 դրամ վարկ՝ 0% տոկոսադրույքով:

Խաղողագործություն, գինեգործություն

Ս/թ փետրվարի 25-ին վարչության կողմից մարզպետի մոտ կազմակերպվեց հանդիպում-քննարկում մարզի խաղող արտադրողների, մարզից խաղող մթերողների և ՀՀ էկոնոմիկայի նախարարության մասնագետների հետ՝ խաղողի մթերումների հետ կապված արտադրողների և մթերողների միջև պայմանագրային հարաբերությունների, վճարումների հետ կապված խնդիրների, բերքի որակական չափանիշների, սորտային առանձնահատկությունների, ըստ սորտերի խաղողի գնի հետ կապված հարցերի վերաբերյալ:

Մարզպետի հետ այցելություններ են կատարվել մարզի գինեգործարաններ և քննարկվել խաղողի սպասվող առատ բերքի իրացման խնդիրը՝ /COVID-19-ով պայմանավորված, գինու սպառման ցածր ծավալներ/:

ՀՀ կառավարության կողմից 1 կգ «Արենի» սորտի խաղողի մթերման համար տրամադրվել է 70 դրամ սուբսիդավորում, որի արդյունքում 7500 տոննա արտադրված խաղողից 3900 տոննան մթերվել է վերամշակողների՝ «Արմենիա Վայն», «Գետափի գինեգործարան», «Արարատի գ/գ», «ՄԱՊ գ/գ» և «Երևանի շամպայն գ/գ» ընկերությունների

կողմից, իսկ մնացած 3600 տոննան մթերվել է մարզի և հանրապետությունում առկա գինեգործարանների կողմից:

Անասնաբուժական բնագավառ

Վարչության պետի նախագահությամբ, վարչության գլխավոր և ավագ մասնագետների անդամակցությամբ ստեղծվել է մարզային հանձնաժողով՝ մարզի գյուղատնտեսությամբ զբաղվող բոլոր տնտեսություններում հունվարի 1-ի դրությամբ գյուղատնտեսական կենդանիների համատարած հաշվառման աշխատանքները սահմանված ժամկետներում կատարելու և վիճակագրական տվյալների արժանահավատությունն ապահովելու նպատակով: 2020 թվականի հունվարի 1-ի դրությամբ մարզում առկա է 19622 գլուխ խ.ե.կ., 12821գլուխ մ.ե.կ, 3284 գլուխ խոզեր, 98046 թև թռչուններ, 22883 փեթակ մեղվաընտանիքներ:

- Մարզի 8 համայնքների 44 բնակավայրերում անասնաբուժական բուժ-պրոֆիլակտիկ միջոցառումներ են իրականացնում 32 անասնաբույժներ: Մարզպետի, վարչության և համայնքների ղեկավարների շարունակական քննարկումների արդյունքում բոլոր 32 անասնաբույժներն էլ մարզի 44 համայնքներում աշխատում են որպես համայնքային անասնաբույժներ՝ միջինը 100 000 դրամ աշխատավարձով,
- Տարվա ընթացքում վարչության կողմից համակարգվել են անասնաբուժական ծառայությունների աշխատանքները: Մարզի անասնաբուժական ծառայությունների կողմից պետ. պատվերով նախատեսված բոլոր անասնաբուժական կանխարգելիչ և ախտորոշիչ միջոցառումներն իրականացվել են՝ համաձայն պլան-գրաֆիկի (բրուցելյոզ խ.ե.կ. 15002գ., Լեյկոզ խ.ե.կ 173գլ., մաշկաբորբ խ.ե.կ 7388գլ., Սիբիրախտ խ.ե.կ 26990գլ., Էմկար խ.ե.կ 25396գլ, դաբաղ խ.ե.կ 38675գլ., բրուց. մ.ե.կ 9928գլ., ժանտախտ խոզերի գլ., թռչուններ 26174 թև, սիբիրախտ ձիերի 377գլ.),
- Վարչության կողմից համակարգվել է Վայոց ձորի մարզի ամառային հեռագնա արոտավայրեր՝ (Ջերմուկ) Արարատի և Արմավիրի մարզերից ներկրվող խոշոր և մանր եղջերավոր կենդանիների շարժը, անհրաժեշտ փաստաթղթերի առկայությունը /կենդանիների փաստացի գրանցման վայրը, առկա գլխաքանակը, ուղեկցող փաստաթուղթը, /անասնաբուժական N 1 ձև/, անասնատիրոջ անձնագիրը/:

2020թ Ջերմուկի ամառային արոտավայրերում պահվում են 15011 գլուխ մանր եղջերավոր և 1346 գլուխ խոշոր եղջերավոր կենդանիներ:

ՀՀ Վայոց ձորի մարզպետի 2020 թվականի հուլիսի 7-ի թիվ 65 կարգադրությամբ մարզի հեռագնա արոտավայրերում արոտավայրերի նպատակային և արդյունավետ օգտագործման, ինչպես նաև կենդանիների վարակիչ հիվանդությունների վերաբերյալ արժանահավատությունն ուսումնասիրելու նպատակով, ստեղծվել է մարզային հանձնաժողով, որը առաջիկայում նշված արոտավայրերում կկազմակերպի ստուգիչ հետազոտություններ՝ անասնահամաճարակային իրավիճակը գնահատելու համար:

Բույսերի պաշտպանություն

Բույսերի պաշտպանության բնագավառում վարչության մասնագետի և ՀՀ Էկոնոմիկայի նախարարության «Գյուղատնտեսական ծառայությունների կենտրոն» ՊՈԱԿ-ի աշխատակիցների հետ միասին կատարվել է 2000հա վարելահողերի վրա մկնանման կրծողներով և իտալական մորեխով վարակավածությանը որոշելու, 1560 հա խաղողի և 575 հա պտղատու այգիների վնասատուների առկայությունը գնահատելու նպատակով մոնիտորինգ:

2020 թվականի հոկտեմբեր ամսվա ընթացքում մարզի 7 համայնքներին տրամադրվել է 51.6 լիտր բրոմադիալոն մկնասպան թունաքիմիկատ՝ 670 հա գյուղատնտեսական մշակաբույսերի պաշտպանության համար:

Ոռոգում

Մարզի բոլոր բնակավայրերում կատարվել է ոռոգման ներտնտեսային համակարգերի գույքագրում:

Այցելություններ ենք կատարվել բոլոր համայնքներ, գրանցվել են ոռոգման համակարգի հիմնախնդիրները և հնարավորությունների սահմաններում տրվել լուծումներ:

2020 թվականի հուլիսի մեկի դրությամբ <<Եղեգնաձոր>> ՋՕԸ-ի կողմից ջրտուքը կազմել է 10500000մ^3, հասույթը՝ 113500000 դրամ, գանձումը՝ 115200000դրամ / 103.6%:

Սպանդանոց

Պարտադիր սպանդանոցային մորթի անցնելու գործընթացը կարգավորելու նպատակով վարչության կողմից կազմակերպվել են բազմաթիվ հանդիպում քննարկումներ միս արտադրողների և մթերողների հետ: Սպանդանոց կառուցել ցանկացող քաղաքացիների հետ տարվել են բազմակողմանի խորհրդատվական աշխատանքներ, տրամադրվել է անհրաժեշտ տեղեկատվություն: Սերտ համագործակցել ենք ՍԱՏՄ Վայոց ձորի մարզային կենտրոնի հետ:

Սպանդանոցների կառուցման նախագծերի, սարքավորումների, հումքի վերամշակման աշխատանքների վերաբերյալ բազմաթիվ առաջարկություններ ենք ներկայացրել ՀՀ էկոնոմիկայի և ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություններ, որոնց մի մասը ընդգրկվել են վերջնական ծրագրերում:

Զառիթափ համայնքում գտնվող միակ գործող սպանդանոցի տնօրինության հետ մշակվել է հայտարարության ձև՝ սպանդանոցային մորթի պայմանների, մատուցվող ծառայությունների, վճարումներ վերաբերյալ և տրամադրել համայնքապետարաններ՝ առաջարկելով այն հնարավորինս տարածել համայնքներում և բնակավայրերում:

2020 թվականին արտադրված բոսաբուծության մթերքներ

	Մշակաբույսի անվանումը	Ցանքատարածությունը /հա/	Արտադրվել է /տոննա/	Միջին բերք /ց,հա/
1	Հացահատիկ և հատիկաընդեղեն	1596	1740	10.9
2	Կարտոֆիլ	123	1730	139
3	Բանջարանոցային	320	4783	150
4	Բոստանային	13	172	135
5	Կերային	1646	134000	81
6	Տեխնիկական մշակաբույսեր	18	265	150
7	Բազմամյա տնկարկ	2516	3546	17
8	Խաղող	1100	8500	7.8

Գյուղատնտեսական տեխնիկա

- ✓ «ՀՀ-ում Գյուղատնտեսական տեխնիկայի ֆինանսական վարձակալություն՝ լիզինգի պետական աջակցություն» ծրագրով մարզի 30 շահառուների տրամադրվել է 3 400 000 դրամ գյուղ տեխնիկա և գյուղ. գործիքներ ձեռք բերելու նպատակով:
- ✓ «Carmac -2» ծրագրով 80-20 համաֆինանսավորմամբ Ռինդ բնակավայրին տրամադրվել է երկու միավոր «Բելառուս 82.1» 82 ձիաուժ հզորությամբ անվավոր տրակտոր, Վերնաշեն բնակավայրի «Արոտօգտագործողներ» ՍԿ-ին տրամադրվել է մեկ միավոր «Բելառուս 1221» 125 ձիաուժ հզորությամբ մեկ միավոր և 2 միավոր «Բելառուս 82» անվավոր տրակտորներ և դիզելային շարժիչով ձեռքի մեկ խոտհնձիչ:

Ծրագրով մարզին տրվել է նաև 18 միավոր գյուղ գործիքներ/շարքացան,գութան, քաղհան փխրեցնող և այլ/:

Մարզում առկա է 516 միավոր գյուղ տեխնիկա և 393 միավոր գյուղ գործիքներ:

Հաշվետու տարում կաթ մթերող և վերամշակող 6 գործարանները մթերել են 930 000լ կաթ, և արտադրել են 132 տոննա պանիր:

- Եղեգնաձորի պահածոների գործարանը մթերել է մոտ 47տ բանջարեղեն /սոխ, սխտոր, խաղողի տերև և այլն/:

Բնական աղետներ

2020 թվականի առաջին կիսամյակի ընթացքում մարզի բոլոր համայնքները տուժել են ցրտահարությունից և կարկտահարությունից: Վարչության մասնագետները այցելել են աղետներից տուժած բոլոր համայնքներ /բնակավայրեր/ և տեղերում համայնքային հանձնաժողովների հետ միասին գնահատել պատճառված վնասի չափը:

Ընդհանուր առմամբ ցրտահարությունից վնասվել են 252.9 հա պտղատու այգիներ /361 184 000 դրամ/, կարկտահարությունից՝ վնասվել են 49 հեկտար պտղատու այգիներ, /147 504 000դր/:

Մարզի Արենի, Աղավնաձոր, Ռինդ,Գնիշիկ, Ելփին, Գետափ բնակավայրերում առկա է 12 հակակարկտային կայանքներ, /960հա ծածկողականությամբ/: Կարկտահարության դեմ

պայքարի լիարժեք աշխատանքներ իրականացնելու համար մարզին անհրաժեշտ են ևս 16 հակակարկտային կայաններ:

Դիմում բողոքներ

Հաշվետու ժամանակահատվածում քաղաքացիներից ստացվել են 72 դիմում -բողոքներ, բարձրացված խնդիրներից յուրաքանչյուրը տեղերում ուսումնսիրվել են վարչության մասնագետների կողմից և հնարավորության սահմաններում տրվել են լուծումներ:

Բնապահպանություն

Արենի և Եղեգիս համայնքների բնակավայրերում տնկվել է 250 000 ուռենու տնկիներ, ծառատունկին մասնակցել է 137 մարդ /100 000դր. միջին աշխատավարձ /կորոնավիրուսի սոցիալական հետևանքների չեզոքացման կառավարության 15-րդ ծրագիր/:

Վայրի, գիշատիչ կենդանիների կողմից պատճառվող վնասներ

Ամեն օր ահազանգեր են ստացվել մարզի տարբեր բնակավայրերից՝ արջերի կողմից պատճառված վնասների վերաբերյալ: Խնդրի լուծման համար ս/թ ապրիլի 15-ին մարզպետի մոտ կայացավ հանդիպում-քննարկում մարզում գործունեություն ծավալող բնապահպանական կազմակերպությունների /Վայրի բնության և մշակութային արժեքների պահպանման հիմնադրամ, Արփա բնապահպանական լանդշաֆտ, «Բնության համաշխարհային հիմնադրամի» Հայաստանյան մասնաճյուղ/, ներկայացուցիչների հետ:

Քննարկման արդյունքում Վայրի բնության և մշակութային արժեքների պահպանման հիմնադրամի, Արփա բնապահպանական լանդշավտի, Բնության համաշխարհային հիմնադրամի Հայաստանյան մասնաճյուղի ներկայացուցիչները պարտավորվեցին իրենց տարեկան բյուջեից ֆինանսական միջոցներ տրամադրել արջերի կողմից բնակչությանը հասցված վնասները մասնակի փոխհատուցելու համար:

Վայրի բնության և մշակութային արժեքների պահպանման հիմնադրամի կողմից մարզին անվճար տրամադրվել է 10 հատ էլեկտրական հովիվ:

Վայրի գիշատիչ /գորշ արջ/ կենդանու կողմից մարզի գյուղացիական և ֆերմերային տնտեսություններին հասցրած վնասը կազմել է **12511 հազ. դրամ**:

Գորշ արջի կողմից հասցված վնասը Արենի համյանքում կազմել է 3 մլն 483 հազ դրամ, Եղեգիս համայնքում՝ 7մլն 128 հազ դրամ, Զառիթափ համայնքում՝ 340 հազ դրամ, Գլաձոր համայնքում ՝ 1մլն 561 հազ դրամ:

Արենի համայնքում հատուցվել է վնասը հատուցվել է 100%ով /3 մլն 483 հազ դրամ/: Եղեգիս համայնքում ձեռք է բերվել բանավոր պայմանավորվածություն՝ արջի հասցրած վնասը փոխհատուցել մինչև 2021 թվականի մարտ ամիս: Զառիթափ համայնքում վնասը հատուցվել է 100%ով /340 հազ դրամ/:

Վարչության պետը ընդգրկվել է ՀՀ Վայոց ձորի մարզի գյուղատնտեսական նշանակության բարձրարժեք հողատեսքերն ավելի ցածրարժեք հողատեսքերի փոխադրելու նպատակով ստեղծված մարզային հանձնաժողովի կազմում, որի որոշմամբ նախատեսվել է գյուղատնտեսության համար ոչ արդյունավետ 26 հա գյուղատնտեսական նշանակության հողատեսքեր տրամադրել արևային վահանակների տեղակայման համար: Ներկա պահին տեղադրված է 1.5հա-ի վրա:

Վերահսկողություն է իրականացվել մարզում գործող 34 ՀԷԿ-երի գործունեության /օգտագործվող ջրի թույլատրելի չափ և թողք/ վրա:

Գյուղատնտեսական օժանդակության ծրագրեր.

Մարզում կառուցվում է 5 <<խելացի>> անասնագոմ, 1.5հա ջերմոցային տնտեսություն, հիմնվել է 60հա խաղողի և 21հա պտղատու ինտենսիվ այգի:

Ներդրումային ծրագիր.

Ջերմուկ համայնքի Կարմրաշեն բնակավայրում կառուցվում է 100 գլխի համար <<խելացի անասնաշենք>>, խ/ե մսի արտադրության համար:Ներկրվել է 100գլուխ /Աբերդին-Անգուս/ մսատու ցեղի մայրական հոտ և 40գլուխ 8 ամսական ցուլիկներ, տավարի մսի արտադրության համար:

Գլաձոր համայնքի Գետափ բնակավայրում հիմնվել է 50հա ինտենսիվ խաղողի այգի: Ներդրողի կողմից գնվել է 100-120հա ջրովի վարելահող՝ խաղողի ինտենսիվ այգի հիմնելու նպատակով:Ս/թ-ին նախատեսնված է գինեգործարանի կառուցումը:

Դրամաշնորհային ծրագիր.

Արենի համայնքի Խաչիկ և Զառիթափ համայնքի Բարձրունի բնակավայրերում /Դիակոնա/ բարեգործական հիմնադրամի կողմից ներդրվեց վեը նշված սահմանամերձ բնակավայրերում 2հա սխտորի մշակություն:

Արտադրված 4.5 տոննա սխտորը վաճառվեց /1կգ-1000դրամ/ և 4.5մլն դրամ գումարը տրամադրվեց սահմանամերձ բնակավայրերի բնակիչներին:

Հաշվետու ժամանակահատվածում արձանագրվել է ձկնագողության 1 դեպք, որսագողության 2 դեպք, ապօրինի ծառահատման 3 դեպք:

Գյուղատնտեսության և բնապահպանության

վարչություն պետ՝ Գ. Մարգարյան

24.12.2020